Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

15.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 2-րդ, 6-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 24-րդ, քաղաքացիական իրավունք բաժնի 4-րդ, 6-րդ, 10-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ, 23-րդ, 32-րդ, 36-րդ, 40-րդ, 44-րդ, 47-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 2

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 6-րդ մասով:

Մասնավորապես, վկայակոչված նորմի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե նա չի միջնորդում գործի քննությունը վերսկսելու մասին:

Նշվածից հետևում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին գործի քննությանը ներգրավելու դեպքում Դատարանի կողմից գործի քննությունը շարունակելու հանգամանքը պայմանավորված է գործի քննությանը ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն չներկայացնելու հետ:

Հարց 6

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, վկայակոչված նորմի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Նշվածից հետևում է, որ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործելն արգելելու պահանջն իմպերատիվ է և այդպիսի ապացույցները չեն կարող օգտագործվել նունիսկ այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը չի առարկում դրա դեմ:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից:

Հարց 19

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրվել է դ) տարբերակը՝ այն է՝ այո, որևէ վավերապայմանի պահանջ առկա չէ, ինչն սխալ պատասխան է:

Հարց 22

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/1274/02/13 քաղաքացիական գործով 21.02.2020 թվականի որոշմամբ անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք դատարան դիմելու հարցում իրավական շահագրգռվածությունը կարող է համարվել նախադատելի նշանակություն ունեցող փաստ, արձանագրել է, որ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է պարզի

հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Ընդ որում, նշված հանգամանքի ապացուցման պարտականությունը կրում է իրավունքների դատական պաշտպանություն հայցող կողմը՝ հայցվորը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հավելել, որ որոշ դեպքերում հայցվորի շահագրգռվածությունն ապացուցման ենթակա չէ: Նշվածը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ միևնույն դատավարության մասնակիցների միջև նույնաբնույթ նյութահիրավական հարաբերությունից բխող նմանատիպ փաստական հանգամանքներ ունեցող վեճով նախկինում քննված մեկ այլ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է հայցվորի իրավական շահագրգռվածությունը: Այդ դեպքում օրինական ուժի մեջ մտած վճիռը կանխորոշիչ նշանակություն է ունենում նոր քաղաքացիական գործի քննության ընթացքում հայցվորի շահագրգռվածության հարցի համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ նման մոտեցումը նպատակ է հետապնդում բացառել միևնույն հանգամանքի (հայցվորի իրավական շահագրգռվածության) վերաբերյալ հակասական դատական ակտերի գոյության հնարավորությունը՝ ապահովելով իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը:

Հարց 24

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով (գլուխ 24) սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը (այսուհետ՝ աշխատանքային վեճ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից հետևյալ ապացույցները պահանջելու մասին.

1) վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները,

2) վիճարկվող անհատական իրավական ակտում որպես հիմք վկայակոչված ներքին և անհատական իրավական ակտերը,

3) աշխատողի գործունեությունը կարգավորող պայմանագրերը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելիս դատարանը կարող է առաջարկել հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջները, համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում ընկած, ինչպես նաև տվյալ անհատական իրավական ակտի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը բոլոր դեպքերում վիճարկվող անհատական ակտը ճանաչում է անվավեր, եթե՝

1) դրանում նշված չէ համապատասխանաբար աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու փաստական կամ իրավական հիմքը.

2) պատասխանողի կողմից խախտվել է աշխատանքային պայմանագիրը փոփոխելու, լուծելու կամ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտով սահմանված կարգը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԱՐԴ/3808/02/18 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով աշխատանքային վեճերով ապացուցման պարտականության բեռի բաշխման հարցին, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում օրենսդիրը սահմանել է աշխատանքային վեճերի քննության հատուկ ընթացակարգ:

Մասնավորապես, կարևորելով առավել սեղմ ժամկետներում աշխատանքային վեճերի լուծման դատավարական գործընթացը, օրենսդրորեն դատարանի վրա պարտականություն է դրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման հետ մեկտեղ գործատուից պահանջել այն բոլոր ապացույցները, որոնք ընկած են վիճարկվող անհատական իրավական ակտի հիմքում, որը գործատուի կողմից ենթակա է կատարման նույնպես առավել սեղմ ժամկետում՝ այդ որոշումն ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում: Ընդ որում, այն դեպքում, երբ գործի նախնական քննության փուլում դատարանն առաջարկում է հայցվորին հայցը փոփոխելու միջոցով ճշգրտելու ոչ հստակ, թերի կամ սխալ ձևակերպված հայցապահանջը, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, դատարանն իրավասու է պահանջելու նաև այլ լրացուցիչ ապացույցներ: Միաժամանակ հարկ է նշել, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում, նկատի ունենալով աշխատողների խոցելի կարգավիճակը, նախատեսվել է նաև ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնից տարբերվող՝ ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոն: Այսպես, օրենսդիրը հստակեցրել է, որ աշխատանքային վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Ըստ այդմ էլ, սահմանվել է նաև, որ վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորող ապացույցը գործատուի կողմից, որպես ընդհանուր կանոն, կարող է ներկայացվել միայն դատարանի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, ինչը ենթադրում է այդ որոշումը գործատուի կողմից ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Հակառակ պարագայում, գործատուն պարտավոր է հիմնավորել իրենից անկախ պատճառներով ապացույցի ներկայացման անհնարինությունը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ աշխատանքային վեճերով դատարանը կաշկանդված չէ կողմի ներկայացրած գործի փաստական հանգամանքներով, ինչպես նաև այդ հանգամանքները հիմնավորելու

նպատակով ներկայացված ապացույցներով, և իրավասու է առաջարկել վեճի կողմերին համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ: Ընդ որում, դատարանի կողմից նման առաջարկ ներկայացնելը չի ենթադրում բացարձակ հայեցողություն, դատարանը ցանկացած պարագայում սահմանափակված է գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու պարտականությամբ:

Նշածից հետևում է, որ աշխատանքային վեճերի լուծման դեպքում նախատեսվել է ապացուցման պարտականության բաշխման ընդհանուր կանոնից տարբերվող՝ ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոն, այն է՝ վիճարկվող անհատական իրավական ակտի իրավաչափությունը հիմնավորելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է գործատուն: Միաժամանակ, աշխատանքային վեճերով դատարանը կաշկանդված չէ կողմի ներկայացրած գործի փաստական հանգամանքներով, ինչպես նաև այդ հանգամանքները հիմնավորելու նպատակով ներկայացված ապացույցներով, և իրավասու է առաջարկել վեճի կողմերին համալրելու ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև ներկայացնելու գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներ:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում Հավակնորդի կողմից որպես ճիշտ տարբերակ ընտրված դ) տարբերակը չի կարող դիտարկվել որպես սխալ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 4

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 473-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հարց 6

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով 01.04.2011 թվականի որոշմամբ անդրադառնալով նշված հարցին, արձանագրել է, որ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը:

Հարց 10

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության համաձայն՝ ամուսիններն իրավունք ունեն ամուսնական պայմանագրով որոշելու միմյանց ապրուստը հոգալու իրենց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, միմյանց եկամուտներին մասնակցելու եղանակները, իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, այն գույքը, որ պետք է հանձնվի իրենցից յուրաքանչյուրին ամուսնալուծվելիս, ինչպես նաև իրավունք ունեն ամուսնական պայմանագրով նախատեսելու իրենց գույքային հարաբերություններին վերաբերող ցանկացած այլ նորմեր: Ամուսնական պայմանագրով ամուսինները կարող են նախատեսել ընդհանուր գույքը բաժանելու հետ կապված վեճն առևտրային արբիտրաժի միջոցով լուծելու հնարավորություն:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ամուսնական պայմանագիրը չի կարող սահմանափակել ամուսինների իրավունակությունը կամ գործունակությունը, իրենց իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու նրանց իրավունքը, կարգավորել ամուսինների միջև անձնական ոչ գույքային հարաբերությունները, երեխաների նկատմամբ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները, նախատեսել անաշխատունակ անապահով ամուսնու ապրուստի միջոց պահանջելու իրավունքը սահմանափակող նորմ, ներառել այլ պայմաններ, որոնք ամուսիններից մեկին դնում են անբարենպաստ իրավիճակի մեջ կամ հակասում են ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքներին:

Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է նաև ամուսնական պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր ճանաչել ամուսիններից մեկի պահանջով, եթե այդ պայմանագրի պայմանները տվյալ ամուսնուն դնում են ծայրահեղ անբարենպաստ իրավիճակի մեջ: Ամուսնական պայմանագրի՝ նույն օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի այլ պահանջները խախտող պայմաններն առ ոչինչ են:

Նշվածից հետևում է, որ ամուսնական պայմանագրով ամուսիններն իրավունք ունեն որոշելու այդ թվում իրենցից յուրաքանչյուրի կողմից ընտանեկան ծախսեր կատարելու կարգը, ինչից էլ հետևում է, որ Հավակնորդի կողմից ընտրված պատասխանն սխալ է:

Հարց 13

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 1-ին մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե գնորդը վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն, ապա նա կարող է վաճառողին վնասների հատուցման պահանջ

ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով պայմանագիրը լուծելուց հետո, լուծված պայմանագրի փոխարեն գործարք չի կնքվել, և եթե տվյալ ապրանքն ունի ընթացիկ գին, կողմը կարող է վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և պայմանագիրը լուծելու պահին ընթացիկ գների միջև տարբերության չափով:

Նշվածից հետևում է, որ Հավակնորդի կողմից ընտրված պատասխանն սխալ է, քանի որ հարցը վերաբերում է այն դեպքին, երբ գնորդը վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այդ դեպքում գնորդը կարող է վաճառողին վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

Միաժամանակ Հանձաժողովը հարկ է համարում նշել, որ Հավակնորդի կողմից վկայակոչված նույն հոդվածի 3-րդ մասը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է այն դեպքերին, երբ լուծված պայմանագրի փոխարեն գործարք չի կնքվել:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշմամբ կատարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի համակարգային վերլուծություն և արձանագրել, որ ապօրինի դատապարտելու հետևանքով պատճառված վնասը հատուցվում է անկախ դատարանի պաշտոնատար անձանց մեղքից, իսկ նույն հոդվածի 3-րդ մասը կիրառելի է այն դեպքում, երբ դատարանի պաշտոնատար անձանց գործողությունները չեն հանգեցրել անձի ապօրինի դատապարտմանը:

Հարց 18

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 2-րդ մասով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե վաճառողը գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է ապրանք, ապա վաճառողը կարող է գնորդին վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով պայմանագիրը լուծելուց հետո, լուծված պայմանագրի փոխարեն գործարք չի կնքվել, և եթե տվյալ ապրանքն ունի ընթացիկ գին, կողմը կարող է վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և պայմանագիրը լուծելու պահին ընթացիկ գների միջև տարբերության չափով:

Նշվածից հետևում է, որ Հավակնորդի կողմից ընտրված պատասխանն սխալ է, քանի որ հարցը վերաբերում է այն դեպքին, երբ վաճառողը գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է ապրանք, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 539-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ այդ դեպքում վաճառողը կարող է գնորդին վնասների հատուցման պահանջ ներկայացնել՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

Միաժամանակ Հանձաժողովը հարկ է համարում նշել, որ Հավակնորդի կողմից վկայակոչված նույն հոդվածի 3-րդ մասը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է այն դեպքերին, երբ լուծված պայմանագրի փոխարեն գործարք չի կնքվել:

Հարց 23

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 01.01.2022 թվականին ուժի մեջ մտած խմբագրությամբ 377-րդ հոդվածով:

Միաժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Հավակնորդը բողոքում վկայակոչել է մինչև գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները:

Հարց 32

Հավակնորդի փաստարկները հանգում են նրան, որ տվյալ հարցը կարգավորող նորմերը հակասում են Սահմանադրությանը, մինչդեռ հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշման բացակայության պայմաններում այն չի կարող լինել Հանձնաժողովի կողմից քննարկման առարկա:

Միաժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Հավականորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրվել է 2-րդ տարբերակը, այն է՝ Բ-ի պահանջը կարող է բավարարվել, եթե դատարանը հարգելի համարի Բ-ի կողմից ժառանգին պահանջ ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը, և այդ ժամկետը վերականգնվի, մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/2190/020/15 քաղաքացիական գործով 07.04.2017 թվականի որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ հոդվածով սահմանված ժամկետը դասվում է իրավադադարեցնող ժամկետների շարքին:

Հարց 36

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումներից:

Ինչ վերաբերում է Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված տարբերակին (Հավակնորդի կողմից ընտրվել է 3-րդ տարբերակը), ապա այն չի կարող գնահատվել որպես ճիշտ պատասխան, քանի որ ըստ խնդրի պայմանների՝ թեև երկու անգամ գնորդին մատակարարվել է ոչ պատշաճ որակի ապրանքներ, սակայն դրանց թերությունները հետագայում գնորդի կողմից ընդունելու ժամկետներում վերացվել են:

Հարց 40

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները Հանձնաժողովը համարում է հիմնավոր այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից:

Նույն օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կոպիտ անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Նշվածից հետևում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ այդ թվում ապրանքների բաղադրամասային թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման այդ թվում արտադրողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից, այնուամենայնիվ նույն օրենգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասից հետևում է, որ եթե վնասի առաջացմանը կամ մեծացմանը նպաստել է տուժողի կոպիտ անզգուշությունը, ապա հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից:

Հիմք ընդունելով նշվածը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հավակնորդի կողմից որպես ճիշտ պատասխան ընտրված 2-րդ տարբերակը, այն է՝ վնասի հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառողի մեղքի աստիճանից, ևս կարող է համարվել որպես առաջադրված հարցի ճիշտ պատասխան, ուստի Հավակնորդի միավորը ենթակա է վերանայման:

Հարց 44

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1035-րդ հոդվածի 3-րդ մասով:

Հարց 47

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/4072/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թվականի որոշմամբ անդրադառնալով վարկային պայմանագրում վարկառուի հաշվից վարկի գումարի անակցեպտ գանձման բանկի իրավունքի նախատեսման իրավաչափության հարցին, արձանագրել է, որ վարկային պայմանագրով կարող է նախատեսված լինել այդպիսի իրավունք, որը պետք է պայմանավորված լինի որոշակի հանգամանքների վրա հասնելու փաստով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 4565 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի.

Քաղաքացիական իրավունք բաժնի 40-րդ հարցի և քաղաքացիական դատավարություն բաժնի 24-րդ հարցերի պատասխանները գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ